№4

Մենք հասանելի ենք

Տեղեկատվական թերթիկ

Օգոստոս 2008

Unison

Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» հասարակական կազմակերպություն

Վարդենիսը բարեփոխումների է սպասում

«Ունիսոնի» թիմի կողմից նախաձեռնած հերթական կլոր սեղանը կայացավ հուլիսի 8-ին Վարդենիսում:

Կլոր սեղանի ընթացքում բարձրացված խնդիրները հիմնականում վերաբերում էին զբաղվածությանը և մատչելիությանը:

Մարզում գործազրկության մակարդակը բարձր է, աշխատատեղերի բացակայությունից բողոքում

Քննարկմանը մասնակցում էին ՏԻՄ-երի, ՀԿ-ների, կրթական և բժշկական հաստատությունների ներկայացուցիչներ: Հատկապես ակտիվ մասնակցություն ցուցաբերեց «Աստղավարդը» Վարդենիսում հաշմանդամ երեխաների հիմնահարցերով զբաղվող միակ ՀԿ-ն: Քաղաքապետարանի աջակցությամբ հաշմանդամների բժշկական և սոցիալական վերականգնման նպատակով, կազմակերպությանը կից գործում են արհեստանոց և մարզադահլիճ: Արհեստանոցի սաները ձեռք են բերում աշխատանքային հմտություններ, որոնք հետագայում կարող են դառնալ իրենց եկամուտի աղբյուր: Ներկայումս ՀԿ-ն ընդլայնում է իր շահառուների շրջանակը՝ ներգրավելով նաև չափահաս հաշմանդամներին:

են ինչպես հաշմանդամները, այնպես էլ ոչ-հաշմանդամները:

Հանրային կառույցներն անմատչելի են, բացառությամբ մասնակիորեն հարմարեցված մեկ հանրակրթական դպրոցի:

«Մեր քաղաքում հաշմանդամները ոչ միայն չեն կարողանում տնից դուրս գալ, ակտիվ մասնակցություն ունենալ հասարակական կյանքում, այլ նաև օգտվել համակարգչային ժամանակակից միջոցներից: Վարդենիսում գործում է ընդամենը մեկ ինտերնետային ակումբ»,- նշեց մասնակիցներից մեկը:

Անշուշտ, խնդիրները շատ են, սակայն նման հանդիպումների և քննարկումների արդյունքում նախանշվում են դրանց լուծման արդյունավետ ուղիները:

Մատչելի տրանսպորտ բոլորի համար

Մոսկվայի ավտոբուսների շուրջ 40 տոկոսը մինչև 2009 թվականի վերջը հարմարեցված կլինեն սայլակավոր հաշմանդամների և տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար: Նման հայտարարությամբ հանդես եկավ «Մոսգորտրանս» պետական հիմնարկի տնօրենի տեղակալ Եվգենի Աղամովը:

Ներկայումս բոլոր ավտոբուսները, որոնք ձեռք է բերում «Մոսգորտրանսը», ցածր հատակով են, սայլակավոր հաշմանդամների համար հարմարեցված տեղերով: Դրանք համալրված են նաև կույր մարդկանց համար նախատեսված ռելիեֆային ցուցանակներով և հատուկ տեղեկատվական վահանակներով խուլ մարդկանց համար: Ձեռքի մակարդակին հավասար գտնվող ռելիեֆային ցուցանակները պարունակում են ուղևորին անհրաժեշտ տեղեկատվություն:

Բացի դրանից, Մոսկվայում մոտակա ժամանակներս նախատեսվում է բոլոր կանգառները հարմարեցնել հաշմանդամների համար: Նման կանգառներ արդեն կան Բուտովոյում, Պրոֆսոյուզնայա փողոցի վրա: Դրանք նշված են «ակնոցներ» հատուկ նշանով, ունեն սայլակավորների համար հատուկ բռնակներ և ավտոբուս բարձրանալու համար հարմարանք:

Իսկ ինչպիսի՞ն է իրավիճակը Հայաստանի մայրաքաղաք Երևանում: 2008թ. ՀՀ պետբյուջեով նախատեսված գումարի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունն իրականացնելու է երեք ծրագիր՝ պետական նշանակության ավտոճանապարհների

էջ 2

Հրապարակումն իրականացվում է Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի և Նիդեռլանդների Կառավարության ֆինանսական միջոցներով

Իրավաբանի անկյուն
Հարց և պատասխան

Ես 25 տարեկան եմ, 1-ին խմբի հաշմանդամ: Ավարտել եմ Երևանի պետական համալսարանի հոգեբանության ֆակուլտետը: Ցանկանում եմ աշխատել: Կարո՞ղ եք նշել հաշմանդամների համար սահմանված աշխատանքային արտոնությունները:

Վ.Կիրակոսյան, 25 տ., ք.Երևան

ՀՀ աշխատանքային օրենսդրությունը հնարավորություն է ընձեռում հաշմանդամություն ունեցող աշխատողներին իրենց պահանջով՝ բժշկական եզրակացության հիման վրա, աշխատել ոչ լրիվ աշխատաժամանակով (ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ):

Բացի դրանից, օրենսդրորեն ամրագրված է, որ հաշմանդամները կարող են ներգրավվել արտաժամյա աշխատանքի, եթե բժշկական եզրակացությամբ դա նրանց արգելված չէ: Հաշմանդամի ներգրավումն արտաժամյա, ոչ աշխատանքային օրերի կամ գիշերային աշխատանքներում թույլատրվում է միայն նրանց համաձայնությամբ և պայմանով, եթե նման աշխատանքները բժշկական եզրակացությամբ նրանց արգելված չեն:

1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների համար սահմանվում է աշխատաժամերի կրճատված տևողություն՝ շաբաթական 36 ժամից ոչ ավելի:

Աշխատանքի ընդունելիս՝ հաշմանդամների համար փորձաշրջան չի սահմանվում:

Աշխատողների թվի կամ հաստիքների կրճատման ժամանակ աշխատանքի հավասար արտադրողականության և նույն որակավորման դեպքում հաշմանդամներն օգտվում են աշխատանքում մնալու առավելությունից:

Իզաբելլա Կարապետյան,
«Ունիսոն» ՀԿ իրավաբան

Մասնակցե՛ք մրցույթներին և հաղթե՛ք

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ ՀՀ-ում տեղի ունեցած երկրաշարժի 20-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակներում «Ունիսոն» հասարակական կազմակերպությունը հրավիրում է մասնակցելու հաշմանդամ ստեղծագործողների ձեռքի աշխատանքների հանրապետական մրցույթին:

Մրցույթին կարող են մասնակցել ցանկացած տեսակի հաշմանդամություն ունեցող անձինք՝ առանց տարիքային սահմանափակման:

Սահմանված են հետևյալ անվանակարգերը՝

1. **Գոբելեն և ասեղնագործություն**
2. **Գեղանկարչություն**
3. **Փորագրություն և խեցեգործություն**

Յուրաքանչյուր անվանակարգում սահմանված է 4 մրցանակ (մեկ գլխավոր, մեկ հատուկ մրցանակ «Երկրաշարժն իմ աչքերով» թեմայով և խրախուսական մրցանակներ):

Զուգահեռաբար մեր կազմակերպությունն անցկացնում է **16-40 տարեկան հաշմանդամ կանանց գեղեցկության ֆոտոմրցույթ**:

Երկու մրցույթների մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը տեղի կունենա հոկտեմբերի 3-ին Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը:

Ձեռքի աշխատանքները և գեղեցկության մրցույթի մասնակիցների լուսանկարներն ընդունվում են **մինչև սեպտեմբերի 24-ը**:

Տեղեկությունների համար զանգահարել (010) 52-21-70 հեռախոսահամարով:

Սկիզբը՝ էջ 1-ում

հիմնանորոգում, տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում և պետական նշանակության ավտոճանապարհների շահագործում և պահպանում: Ցավոք, հաշմանդամների համար հասարակական տրանսպորտի հարմարեցումը, որը, ի դեպ, չի պահանջում հսկայական ֆինանսական ներդրումներ, նախատեսված չէ:

Ներկայումս Երևանում գործում է ընդամենը մեկ հարմարեցված տրոլեյբուս, ինչն ակնհայտորեն անբավարար է տարբեր հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի տրանսպորտի մասին խոսելու համար: Խնդիրն առկա է, քանի դեռ բացակայում են դրա իրավական լուծումները և իրացման մեխանիզմները: Մատչելի տրանսպորտի առկայությունը իրապես կնպաստի հասարակական կյանքի տարբեր ոլորտներում հաշմանդամների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:

«Ունիսոն» հասարակական կազմակերպությունը
հաշմանդամներին անվճար տրամադրում է

- զբաղվածության կենտրոնի ծառայություններ (տեղյուսեի կազմում, հարցազրույցին նախապատրաստում և այլն)
- իրավաբանական խորհրդատվություն
- հոգեբանական աջակցություն

Անցկացվում են նաև կերպարվեստի պարապմունքներ:

52-21-70

Նախագիծն իրականացվում է Բաց հասարակության Ինստիտուտի և Նյուբերգերների կառավարության ֆինանսական միջոցներով

Հաշմանդամ կենդանիները մուլտիպլիկացիոն կինոնկարում



Պատմության մեջ առաջին անգամ BBC հեռուստաընկերությունը պատրաստվում է ցուցադրել մուլտսերիալ, որի բոլոր հերոսները հաշմանդամներ են: Պլաստիլինե կենդանիները կոչ են անելու հանդիսատեսին փոխել վերաբերմունքը հաշմանդամություն ունեցող մարդկանց նկատմամբ:

Իրոք, աննախադեպ է նման հերոսների ընտրությունը. հաշմանդամի սայլակով ոգնի, շուն՝ հետին վերջույթների փոխարեն անիվներով, հենակներ օգտագործող կրիա... Յուրաքանչյուր կենդանին պատմում է, թե ինչպես է հաշմանդամ դարձել: Հատկանշական է, որ մուլտհերոսներին ինչյունավորելու են ոչ միայն պրոֆեսիոնալ դերասաններ, այլ նաև հաշմանդամ մարդիկ:

Գլխավոր խմբագիր
Արմեն Ալավերդյան
Հրապարակումը պատրաստեցին
Դավիթ Բաբայան
Մարիաննա Չալիկյան
Իզաբելլա Կարապետյան
Հասցե՝ «Ունիսոն» ՀԿ, Երևան 0002, Դեմիրճյան 36
Հեռ./Ֆաքս՝ (010) 52-21-70
Վեբ-կայք՝ www.unison.am
էլ. փոստ՝ unison@unison.am